ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔ-ԱՐԱԳԱԾՈՏՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Միջնադարում Հայաստանի զանազան տարածաշրջանների, այդ թվում նաև Սյունյաց լեռնաշխարհի և Հայոց Այրարատ նահանգի կենտրոնական գավառ Արագածոտնի միջև եղել են սերտ կրթական առնչություններ, որոնք առավել արտահայտվել են VII, XIV/XV, XVII դարերում: Այդ առնչությունների շնորհիվ մի տարածքի կրթարանում ստեղծված գիտելիքները փոխանցվում էին մեկ այլ վայրի դպրոց: Դրանցից օգտվում էին նաև Հայաստանի մյուս կրթօջախները նույնպես՝ այդպիսով ապահովելով երկրում ընդհանուր կրթական մակարդակը:

Բանալի բառեր՝ *Սյունիք, Արագածոտն, կրթական, առնչություն, միջնադար, Հայաստան, տարածաշրջան:*

Հայոց աշխարհի զանազան երկրամասերի, նահանգների, գավառների միջև հնուց ի վեր գոյություն են ունեցել բազմապիսի կապեր: Այդ բազմաբնույթ առնչությունները, հատկապես տնտեսական, առևտրական, մշակութային, կրթական հարաբերությունները, հազարամյակների ընթացքում այնքան են խորացել, սերտաճել, որ չեն խաթարվել անգամ հայ ժողովրդի քաղաքական պատմության անկումային՝ անանկախ փուլերում:

Կրթական հարաբերությունների, առնչությունների յուրօրինակ դրսևորումների հանդիպում ենք Սյունյաց լեռնաշխարհի և Հայոց Միջնաշխարհի՝ Այրարատ նահանգի կենտրոնական գավառ Արագածոտնի միջև: Դրանք, ըստ մեզ հայտնի պատմական սկզբնաղբյուրների, առավել արտահայտվում են VII, XIV- XV և XVII դարերում:

VII դարում Հայաստանի զանազան վայրերում կային մեծ թվով կրթական օջախներ, որոնցից հատկապես հայտնի էին կաթողիկոսարանի վարդապետական դպրոցը մայրաքաղաք Դվինում և Արշարունիքի (Երասխաձորի) վարդապետարանը, «...յորում զմանկունսն ժողովեալ էին ճարտարք և գիտունք Հայոց»[1]: Բայց բոլորի մեջ ամենանշանավորը Սյունիքի վարդապետարանն էր, որն էլ ավելի հռչակվեց Սյունյաց մետրոպոլիտական աթոռի տեղապահ, «մեծ քերթող» և «անյաղթ փիլիսոփայ» Մաթուսաղայի օրոք: Ստեփանոս Օրբելյանը պատկառազդու մեծարանքով է բնութագրում VII դ. հայ մեծանուն գիտնականին. «Այս Մաթուսաղայ էր սնեալ ամենայն պարկեշտութեամբ և զարգացեալ ամենայն առաքինութեամբ. ուսեալ զքերթողութիւնն և վարժեալ ճարտասանականաւն, հմտացեալ փիլիսոփայական արհեստից, լի ամենայն իմաստութեամբ և կատարեալ գիտութեամբ»[2]: Սիսական պատմիչի անաչառ հավաստմամբ՝ «Եւ զի էր մեծարոյ և նախաթոռ ի վարդապետսն Հայոց աթոռն Սիւնեաց. զի էր ի վաղնջուց հետէ հրամայեալ զթարգմանութիւնն և զմեկնո-

1 «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի», Թիֆլիս, 1910, էջ 113:

2 Նույն տեղում, էջ 112-113:

ղութիւնն նոցա ունել ի սրբոցն Սահակայ և Մեսրոբայ, և գլուխ կալ և հրամանատար ամենայն վարդապետացն Հայոց»[1]: Պատմագրի վստահեցմամբ՝ Մաթուսաղա Սյունեցու իմացություններն ու առաքինությունները պատճառ դարձան, որ նրան «կացուցանեն յաստիճան վարդապետութեան եկեղեցւոյ. և նստուցանեն գլուխ ամենայն վարդապետացն ի վերայ բարձր և ահարկու ամբիոնի ռաբունարանին, յորմէ բղխէր գետօրէն աստուածային իմաստութիւնն և փարթամացուցանէր զամենայն աշակերտեալսն»[2]: Այդ աշակերտողների մեջ էր Կոմիտաս Ա. Աղցեցի կաթողիկոսի (613-628) եղբորորդի ու ձեռնասուն սան Թեոդորոսը, որին հորեղբայրն ուղարկել էր Սյունիք՝ սովորելու մեծ վարդապետ Մաթուսաղայի մոտ: Վերջինս Թեոդորոսին ընդունելով՝ «...մեծաւ զգուշութեամբ ուսոյց և հասոյց ի գլուխ կատարման գիտութեան զարդարեալ տեսականաւն և գործականաւն»[3]: Մաթուսաղա Սյունեցին այն աստիճան էր վստահում երիտասարդ Թեոդորոսին, որ նրան երաշխավորեց իր փոխարեն մասնակցելու Կարինի 633 թ. հայ-բյուզանդական եկեղեցական համատեղ ժողովին՝ նվիրված դավանաբանական նոր ուսմունքին՝ միակամությանը, որով իբր պետք է հարթվեին երկու եկեղեցիների միջև առկա քրիստոսաբանական տարաձայնությունները:

Նշանակվելով Արագածոտնի Ս. Աստվածածին վանքի վանահայր՝ Թեոդորոսը, ով արդեն հայտնի էր Քռթենավոր կամ Ճգնավոր մականվամբ, տեղում հիմնում է բարձրագույն վարդապետական դպրոց, որը շուտով մեծ հռչակ է ձեռք բերում: Նախկինում սխալմամբ, անհիմն կերպով Արագածոտնի Ս. Աստվածածնի դպրեվանքը, որքան էլ տարօրինակ է, տեղադրում էին Շիրակի Հառիճավանքում, մինչդեռ այն գտնվել է ներկայիս Ավան գյուղի տարածքում[4]:

Արագածոտնի Ս. Աստվածածնի դպրեվանքում Թեոդորոս Քռթենավորին են աշակերտել հետագայում կաթողիկոսներ Սահակ Գ. Ձորոփորեցին (677-703) և ս. Հովհան Գ. Օձնեցին (717-728):

Ս. Աստվածածնի դպրեվանքի կրթական հիմքում Սիսականի բարձրագույն հոգևոր դպրոցի ուսումնական ծրագրերն էին: Համեմատական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դպրեվանքի սաները սովորել են աստվածաբանություն, փիլիսոփայություն, տրամաբանություն, քերականություն, ճարտասանություն, քերթողական արվեստ, երաժշտագիտություն, կրոնագիտություն, աղանդագիտություն, կանոնագիտություն, հունարեն և այլն: Հունարենին հրաշալի տիրապետել են թե՛ Մաթուսաղա Սյունեցին, թե՛ Թեոդորոս Քռթենավորը, այլապես ինչպե՞ս կարող էին բանավիճել բյուզանդացի վարդապետների հետ, որի ժամանակ պետք է դրսևորեին լեզվական խոր իմացություններ, աստվածաբանական, փիլիսոփայական փայլուն գիտելիքներ՝ խարսխված կուռ տրամաբանական տեսակետների, եզրահանգումների վրա:

Մանուկ Աբեղյանի քննությամբ՝ հունականին էր հետևում նաև հայ հռետորական ոճը: Դրան «արդեն նմանում էին և մեր քերթողները, ինչպես Թեոդորոս Քռթենավորը, որոնք, բացի իրենց ինքնահնար բառերից ու դարձվածներից, ենթարկվում էին երբեմն նաև հունաբանության: Նրանք արդեն այն ժամա-

1 Նույն տեղում, էջ 113:
2 Նույն տեղում:
3 Նույն տեղում, էջ 113-114:
4 Տե՛ս **Մանուչարյան Ա.**, Արագածոտնի Ս. Աստվածածին դպրավանքի տեղադրությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 2016, № 1, էջ 38-45:

նակ, երբ դժվար է ենթադրել արաբական ազդեցություն, գրում էին չափազանց ծանր, խճողված, զարդարուն ու վերամբարձ ոճով»[1]:

Ժամանակի աղանդների դեմ պայքարել ու հակաճառություններ են գրել թե՛ Թեոդորոս Քռթենավորը[2], թե՛ նրա աշակերտ Հովհան Օձնեցին[3]:

Բանասեր գիտնականի ուսումնասիրությամբ՝ Թեոդորոս Քռթենավորը հեղինակել է ճառեր, ներբողներ, կցուրդներ (եկեղեցական հոգևոր երգեր, որոնց հիմքում, ի տարբերություն շարականների, Ս. Գիրքը չէ)[4]: Հոգևոր երգեր է ստեղծագործել նաև նրա աշակերտ Սահակ Ձորոփորեցին: Այդ կապակցությամբ Մ. Աբեղյանը գրում է. «Այս տեսակի շարականների գեղեցիկ օրինակ են Ս. Խաչի կանոնները, որոնցից Վերացման Խաչինը վերագրվում է **Սահակ Ձորափորեցի** նշանավոր կաթողիկոսին ..., որ Թեոդորոս Քռթենավորի աշակերտն է, մի ժողովրդական մեծ հռչակ վայելող անձ»[5]: Գիտնականի պարզաբանմամբ՝ «Խաչի պաշտամունքը 7-րդ դարում շատ զորացած էր Հիսուսի Խաչափայտի գերվելու և ազատվելու կապակցությամբ, ուստի անհավանական չէ, որ Սահակ Ձորափորեցին Խաչի համար երգեր հորինած լինի: Դրանց մեջ Խաչի բոլոր նկարագիրն ու համեմատություններն առնված են մեկնություններից ու ճառերից: Այդ երգերն իրենց առանձին տների բովանդակությամբ ու պատկերներով գրեթե չեն տարբերվում, օրինակ, Դավիթ Անհաղթի մի մեկնությունից և «Ներբողեանից ի Ս. Խաչն»: Կան նմանություններ նաև Սահակ Ձորափորեցու ուսուցիչ Թեոդորոս Քռթենավորի «Ներբողեան ի Ս. Խաչն» ճառին: «Ս. Խաչը» հաճախ երգվում է իբրև «նշան հաղթութեան» թշնամիների դեմ, «գաւազան զօրութեան» հավատացյալների համար»[6]: Իսկ Քռթենավորի մյուս աշակերտ, Մեծն Հովհան Օձնեցին իր կանոնախմբի 27-28-րդ կանոններով սահմանում է խաչի օրինության, օծության կարգը. պատվում, պաշտում, երկրպագում, համբուրում, «զի ի նոսա բնակէ Հոգին Սուրբ»[7], որով փաստորեն Հայոց մեջ ուղղափառ պատկերապաշտությունը հանգեցվում է խաչապաշտության[8]: Վերջինս շատ կարևոր էր, քանի որ «Ընդդէմ պաւղիկեանց» ճառում Հովհան Օձնեցին այն միտքն է հայտնում, որ պավլիկյանների (առհասարակ աղանդավորականների-Ա.Մ.) պատկերամարտությունը (սրբապատկերների մերժումը) տանում է «ի խաչամարտութիւն եւ քրիստոսատեցութիւն, եւ անտուստ յանաստուածութիւն եւ ի դիւապաշտութիւն»[9]: Խաչապաշտության արմատավորումն ու հաստատումը Հայոց մեջ այն պատմաեկեղեցական առաքելությունն էր, որ կատարեց Սյունյաց վարդապետարանից ընձյուղված Արագածոտնի Ս. Աստվածածնի դպրեվանքը:

Հետագա դարերում, հատկապես Բագրատունյաց հարստության (IX-XI

1 **Աբեղյան Մ.**, Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 614:

2 Գրել է հակաճառություն Սարգիս Մայրագոմեցու նորաբուս երևույթականություն աղանդի դեմ՝ «Ընդդէմ Մայրագումացոյն» (տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 328, 391, 643):

3 Տե՛ս ***Յովհան Աւձնեցի***, Նորին ընդդէմ երեւութականաց, էջ 45-66, Նորին ընդդէմ պաւղիկեանց, էջ 37-67, «Մատենագիրք հայոց», հ. Է, Անթիլիաս, 2007:

4 Տե՛ս **Աբեղյան Մ.**, նշվ. աշխ., էջ 532-533:

5 Նույն տեղում, էջ 553:

6 Նույն տեղում:

7 Տե՛ս «Կանոնագիրք հայոց», Ա, աշխ. Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 532-533:

8 Տե՛ս **Սահակյան Ա.**, Միջնադարյան պատկերապաշտության հայկական տարբերակը, «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 2, էջ 155:

9 **Հովհան Օձնեցի**, Նորին ընդդէմ պաւղիկեանց, էջ 37:

դդ.) և Զաքարյան իշխանապետության (XIII-XIV դդ.) բարենպաստ ժամանակներում, Սյունիք-Արագածոտն ուսումնական փոխադարձ շփումներն էլ ավելի պետք է աշխուժանային ի շահ հայոց ընդհանուր կրթական գործի: Ակնարկներ կան 1267 թ. Վարդան Արևելցու ջանքերով բացված Սաղմոսավանքի վարդապետական բարձրագույն դպրոցի և Գլաձորի համալսարանի միջև կրթական, գրչական կապերի մասին:

XIV դ. վերջերից հայոց գլխավոր բարձրագույն կրթօջախը Տաթևի համալսարանն էր: Ականատես պատմիչ և Տաթևի համալսարանական Թովմա Մեծոփեցու վկայությամբ՝ Գրիգոր Տաթևացին «Բ. (2) ամ էր, որ նստեալ էր յաթոռ վարդապետութեան ուսուցանելոյ: Զի համշիրակ[1] եղբայրք իւր գնացին ի նմանէ. մեծն Յակոբ գնաց ի յերկիրն Այրարատեան, եւ բնակութիւն իւր արարեալ զսուրբ ուխտն Սաղմոսավանից, որ Ի. (20) ամ աշակերտեալ էր Յովհաննու Որոտնեցւոյ»[2]:

Հայտնի է, որ միջնադարի մեծ մտածող, աստվածաբան ու փիլիսոփա, գիտակրթական գործի հմուտ կազմակերպիչ ս. Հովհան Որոտնեցին վախճանվել է 1386 թ., որին Տաթևի համալսարանի րաբունապետի պաշտոնում հաջորդել է նրա նվիրական աշակերտ ս. Գրիգոր Տաթևացին: Ըստ պատմիչի հաղորդածի՝ վերջինս երկու տարի էր, որ գլխավորում էր համալսարանը, երբ Հակոբը Տաթևից տեղափոխվում է Սաղմոսավանք: Ստացվում է, որ Հակոբը հաստատվել է նոր վայրում 1388 թ.՝ մինչ այդ 20 տարի աշակերտած լինելով մեծ ուսուցչապետ Հովհան Որոտնեցուն, ում մոտ ուսանելու է գնացել 1366 թվականին: Հակոբ րաբունապետը մինչև իր մահը՝ 1411 թ., ընդհանուր առմամբ 23 տարի, գլխավորել է Սաղմոսավանքի վարդապետարանը: Պետք է ենթադրել, որ կրթագիտական հարուստ ավանդույթներ ունեցող Սաղմոսավանքի վարդապետարանում Հակոբ րաբունապետի ուսուցչապետության տարիներին կիրառվել են Տաթևի համալսարանի ուսումնակրթական ծրագրերը, որոնց շրջանակներում ապագա վարդապետներն ուսումնասիրել են Ս. Գիրք, աստվածաբանություն, փիլիսոփայություն, ճարտասանություն, քերականություն, պոետիկա, մանկավարժություն, հայոց լեզու, գրականություն, պատմություն, գեղագրություն, երաժշտություն, քարոզության արվեստ, հունարեն, լատիներեն և այլ առարկաներ[3]:

1410 թ. Գրիգոր Տաթևացին և իր աշակերտներն անբարենպաստ քաղաքական պայմաններում Մեծոփի վանքից, ուր հանգրվանել էին ժամանակավորապես, «գաղտագողի ... գնացին ի գաւառն Այրարատեան, առ մեծ վարժապետն Յակոբ Սաղմոսավանից՝ հոգեւոր հարազատն իւր: Եւ մեք ամենեքեան՝ վարդապետք եւ աշակերտք, ելեալ գնացաք առ նա»[4]: Գրիգոր Տաթևացու ետևից «...եկեալ դարձեալ աշակերտք նորա ի Սիւնեաց ի սուրբ ուխտէն առաքելոյն Տաթեւու իմաստասէր եպիսկոպոսն եւ վարդապետն տէր Առաքել՝ տարաւ

1 «Համշիրակ» բառն ունի պահլ., պարսկ. ծագում և նշանակում է «կաթնկից», «սննդակից», «կաթնեղբայր» (տե՛ս «Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հ. III, Երեւան, 1944, էջ 34): «Համշիրակ» տվյալ պարագայում պետք է հասկանալ՝ «աշակերտակից», «դասընկեր»:

2 **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրություն, աշխ. Լ. Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 44:

3 Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 992-993:

4 **Թովմա Մեծոփեցի**, նշվ. աշխ., էջ 82:

զնա: Եւ յետ Ը. (8) աւուր գնալոյ նորա հիւանդացաւ եւ փոխեցաւ յաստի կենացս ի հանդերձեալն»[1]:

Հաջորդ տարին էլ վախճանվում է Հակոբ Ռաբունապետը: Սաղմոսավանքի փոքր գերեզմանոցում, որ գտնվում է գավթից հյուսիս՝ պարսպից դուրս, Հակոբ վարդապետի հիշատակին կանգնեցված է շքեղ քանդակազարդված մեծ խաչքար[2]: Հնագետ Հ. Եղիազարյանն այդ խաչքարի առջև հաշվել է եռաշարք տեղադրված 24 տապանաքար[3], որոնց ներքո հանգչում են Հակոբ ուսուցչապետի աշակերտների աճյունները:

Որքան էլ դժնդակ ու անկումնային լինեին հաջորդած երկու հարյուրամյակները հայ ժողովրդի կյանքի բոլոր բնագավառներում, այդ թվում նաև կրթության ոլորտում, այնուհանդերձ XVII դ. սկզբներին բարեբախտաբար գտնվեցին ստեղծված իրավիճակով մտահոգ գործիչներ, որոնք իրենց առջև խնդիր դրեցին վերածնելու անցյալի մշակութային, հոգևոր-կրթական լավագույն ավանդույթները: Սարգիս Սաղմոսավանեցու, Պողոս Տրապիզոնացու, Մովսես Տաթևացու ջանքերով Սյունիքից սկսված անապատական շարժումը շուտով տվեց իր պտուղները:

Անխոնջ Սարգիս եպիսկոպոս Սաղմոսավանեցու և նրա նվիրյալ աջակիցների պատմական առաքելությունը բարձր է գնահատել Առաքել Դավրիժեցին: Ըստ պատմագրի՝ նրանց հիմնադրած անապատներն այն պատմական դերակատարությունն ունեցան, որ այնտեղ շողաց գիտության լույսը և լուսավորեց մերձակայքը, դրանցով էլ ամբողջ հայ ազգը, «...քանզի մինչև ցայս վայր տգիտութեամբ խոպանացեալ և կորդացեալ էր ազգս Հայոց, և ոչ միայն ոչ ընթեռնուին, այլ և ոչ գիրս գիտէին և ոչ զզօրութիւնս գրոց. վասն զի անպիտանացեալ էր գիրքն յաչս մարդկան, և իբրև զկոճեղս փայտից անկեալ էր ուրեք՝ լցեալ հողով և մոխրով»[4]:

Անապատներ էին հիմնվում ու դպրոցներ բացվում ամենուրեք: Այս շրջանում էլ սերտաճում են կրթական կապերը Սյունիքի և Արագածոտնի միջև: Առաքել Դավրիժեցու վկայությամբ՝ Մովսես վարդապետ Տաթևացին «կարգեաց դպրատուն ի մեծափառ սուրբ ուխտն Յոհանավանք, ուր ժողովեաց մանկունս յոլովս, և զամենեցուն զծախսն և զպէտսն ինքն հոգայր, և մանկունքն անզբաղ և անխափան ուսանէին զեկեղեցական ուսումն, և զգիրս Աստուածաշունչս, և զիմաստասիրականս, որք եղեն ամենեքեան արք պիտանիք և օգտակարք աշխարհի. վարդապետք, եպիսկոպոսք, և աբեղայք, և երիցունք, և ամենայն վանօրայք, որք ամայացեալք ի խաւարի կային, եղեն լցեալք միաբանօք, աբեղայիւք, և կրօնաւորօք, և գեղօրայք՝ վարժ երիցամբք»[5]:

Հովհաննավանքի նորաբաց դպրատան բեղուն գործունեությանը հաջորդաբար իրենց նպաստն են բերել այդ հռչակավոր մենաստանի գիտնական առաջնորդները. «Թուին ՌՀԸ (1629-Ա. Մ.) եղև հայր **Յովհաննէս** Կարբեցի, որ է

1 Նույն տեղում, էջ 83:
2 Տե՛ս **Մանուչարյան Ա.**, Սաղմոսավանք, Сагмосаванк, Saghmosavank, Երևան, 2015, էջ 123:
3 Տե՛ս **Եղիազարյան Հ.**, Սաղմոսավանք, «Էջմիածին», 1961, Ձ, էջ 41:
4 **Առաքել Դաւրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխ. Լ. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 219:
5 Նույն տեղում, էջ 254:

Գայլն...: Սա յոյժ տեղեակ էր տօմարի»[1] և «ճարտար ի գործ»[2]: Զաքարիա Քանաքեռցին շարունակում է, որ «Թուին ՌՁ (1631- Ա. Մ.). եղև Հայր և դպրապետ **Ղուկաս** բազմահանճար վարդապետ՝ հրամանաւ Մովսէս Կաթուղիկոսի: Զայս ուսաք յաշակերտաց նորա:

Թուին ՌՁԳ (1634- Ա. Մ.). եղև Հայր **Յովհաննէս** Եպիսկոպոս Կարբեցի, այր ճգնաւոր և սուրբ, և գիտուն ամենայն հին և նոր կտակարանաց և պատմութեանց»[3]:

Հովհաննավանքի դպրատունն իր ծաղկուն շրջանն է ապրել Զաքարիա եպիսկոպոս Վաղարշապատեցի վանահոր առաջնորդության տարիներին՝ 1637-1651 թթ.: Զաքարիան ժամանակի ասմենաուսյալ անձանցից մեկն էր: Պատմագիր Քանաքեռցու վկայությամբ՝ նա Մովսես Տաթևացու աշակերտներից էր, տիրապետում էր հինգ լեզվի՝ հայերենի, թուրքերենի, պարսկերենի, ֆրանսերենի, հնդկերենի, եղել է հզոր աստվածաբան, փայլուն ճարտասան, գեղագրական արվեստի հմուտ գիտակ[4]: Զաքարիա Վաղարշապատեցին ոչ միայն շենացրել է Հովհաննավանքը, միաբանների թիվը հասցրել 60-ի, ինչպես փաստում է տեղի Կաթողիկեի 1639 թ. արձանագրությունը[5], բարելավել վանական տնտեսությունը, կատարել նոր կառուցումներ, վերազինել վանքի գրադարանը, այլև դպրանոցում դասավանդելու մեջ է ներգրավել ժամանակի նշանավոր մասնագետների, որոնց թվում նաև այդ դպրոցի սան, պատմագիր Զաքարիա Քանաքեռցուն, ում «կարգեաց ուսուցիչ մանկանցն: Եւ եբեր Ջուցայեցի Սիմէօն վարդապետն, որ ուսոյց մեզ արհեստ արտաքնոց[6]: Եւ Իլովացի (լվովցի- Ա. Մ.) Նիկողայոս վարդապետն բերեալ, որ ուսոյց զերաժշտութիւնն: Եւ այլ ամենայն բարեկարգութիւն եմոյծ նա անդ, և ամենայն ինչ հասարակաց, և ոչ ոք ստացաւ առանձին ինչ»[7]:

Հովհաննավանքի դպրատունն ուսմամբ ու առաքինությամբ այն աստիճան կատարելության է հասնում, որ Փիլիպոս Ա. Աղբակեցի կաթողիկոսի (1632-1655) օրոք տեղափոխվում է Մայր Աթոռ[8] և վերանվանվում որպես «Էջմիածնի ժառանգավորաց դպրոց, ամենաբարձրն էր Արարատյան նահանգում և ընդհանրապես բոլոր հայկական դպրոցների մեջ և նա էր, որ հետագայում հիմք դարձավ Էջմիածնի ճեմարանին»[9]: Եվ այդ ամենի ակունքներում Սյունյաց Մեծ անապատում մի խումբ նվիրյալների, այդ թվում նաև արագածոտնեցի Սարգիս եպիսկոպոսի անդուլ ու համառ ջանքերի գնով վերածնված հայոց դպրությունն էր:

Այսպիսով, դիտարկելով Սյունիք-Արագածոտն կրթական պատմական

1 «Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն», հ. 3-րդ, Վաղարշապատ, 1870, էջ 32:

2 **Ղ. Ալիշան**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 173:

3 **Զաքարիա Սարկավագ**, նույն տեղում:

4 Տե՛ս նույն տեղում, էջ 33-34:

5 Տե՛ս **Ղաֆադարյան Կ.**, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 80-81:

6 Ըստ Ստ. Մալխասյանցի՝ «արհեստ արտաքնոց» պետք է հասկանալ՝ «կրօնական գիտութիւններից դուրս գտնվող, նրանց շարքին չպատկանող: Արտաքին գիտութիւներ» («Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հ. I, Երեւան, 1944, էջ285):

7 **Զաքարիա Սարկավագ,** նույն տեղում:

8 Տե՛ս **Առաքել Դաւրիժեցի**, էջ 266:

9 **Կ. Ղաֆադարյան**, նշվ. աշխ., էջ 55:

առնչությունները՝ տեսնում ենք, թե որքան սերտ են եղել դրանք միջնադարի տարբեր փուլերում, և եզրահանգում ենք, որ անցյալում Հայաստանի որևէ վայրի նշանավոր կրթարանում ձևավորված ու մատուցված գիտելիքները՝ համապատասխան ուսումնագիտական ծրագրերի մշակմամբ, փոխանցվել են այլ տարածաշրջանների կրթօջախներ ևս՝ դրանով իսկ ապահովելով կրթության ընդհանուր մակարդակը ողջ երկրում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Երկեր, Գ, Երևան, 1968:
2. Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890:
3. Առաքել Դաւրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխ. Լ. Խանլարյանի, Երևան, 1990:
4. Եղիազարյան Հ., Սաղմոսավանք, «Էջմիածին», Զ, 1961:
5. «Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն», հ. 3-րդ, Վաղարշապատ, 1870:
6. Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխ. Լ. Խաչիկյանի, Երևան, 1999:
7. «Կանոնագիրք հայոց», Ա, աշխ. Վ. Հակոբյանի, Երևան, 1964:
8. «Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հ. I, Երեւան, 1944:
9. «Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հ. III, Երեւան, 1944:
10. Ղաֆադարյան Կ., Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948:
11. Մանուչարյան Ա., Սաղմոսավանք, Сагмосаванк, Saghmosavank, Երևան, 2015:
12. Մանուչարյան Ա., Արագածոտնի Ս. Աստվածածին դպրավանքի տեղադրությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2016, № 1:
13. Յովհան Աւձնեցի, Նորին ընդդէմ երեւութականաց, էջ 45-66, Նորին ընդդէմ պաւղիկեանց, էջ 37-67, «Մատենագիրք հայոց», հ. Է, Անթիլիաս, 2007:
14. «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի», Թիֆլիս, 1910:
15. Սահակյան Ա., Միջնադարյան պատկերապաշտության հայկական տարբերակը, «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 2:
16. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002:

ОБРАЗОВАТЕЛЬНЫЕ ОТНОШЕНИЯ СЮНИКА-АРАГАЦОТНА В СРЕДНЕВЕКОВЬЕ - АШОТ МАНУЧАРЯН - В средние века в Армении между различными регионами были тесные образовательные отношения, как и между Сюником и Арагацотном, которые особенно проявились в VII в., в частности между Сюникской архимандритской школой и духовной семинарией монастыря С. Богоматери Арагацотна, в XIV/XV в. между Татевским университетом и высшей архимандритской школой Сагмосаванка, а в XVII в. между Сюникской Большой пустыни и Ованаванка. Благодаря этим отношениям приобретенные знания школы одного региона передовались в учебное заведения другой провинции. Это дало возможность распространению знаний в другие учебные центры Армении, обеспечивая общий уровень оброзования в стране.

***Ключевые слова**:* Сюник, Арагацотн, образовательный, отношение, средневековье, Армения, регион.

THE SYUNIK-ARAGATSOTN EDUCATIONAL LIAISONS IN THE MIDDLE AGES - ASHOT MANUCHARYAN - In the middle ages there existed mutual educational liaisons between different regions of Armenia. One of such mutual educational liaison existed between Syunik in the peripherals and Aragatsotn in the central part of the country that were vividly manifested in the VII c., such as Syunik Great Episcopate school and St. Astvatsatsin/ Vergin spiritual school; in the XIV-XVcc, such as Tatev university-higher episcoposate school at Saghmosavank; XVII c., such as Syuniats Great Desert monastery and Hovhanavank monastery. Such liaisons favored both to the development and to keeping the appropriate level of the educational activities in the country on the whole.

***Key words**:* Syunik, Aragatsotn, educational, liaison, middle ages